

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 10 մր.  
Վեցամսեայ 5 »  
Արտասահմանի հա-  
մար տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
ԿԱՆԻՍԻ ՎՃԱՐՆԵԼԻ  
—(—  
Գրութիւնք եւ չեմ տրուիր  
—(—  
Իրանացիական տոյր 20 սան-  
քիւն հ. երեքին աւելի սև-  
զանկերու համար 20 Օ10  
գինջ կըլայ:

# ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
Адвокатъ

Նախակ եւ դրամ դրկեյ  
Խմբագրութեան հասցեիկն.  
—  
Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie).

*Nevel'skaya's Langsam 11 4  
Varna (Bulgarie)*

## ՄԻԱԿ ԽՈՐԱԳԻՐ ՍԸ

—(—  
Բ.

Գալով դիւանագիտութեան կարծիքին, Պ. Արփիար թող հաճի ցուցնել մեզ թէ արգելք յետ յետադիմացիան ու է ցոյց կամ գործունէութիւն ջասագումար է երբեք դիւանագետներու կապոյտ կամ որ երբեք գոյնով մէկ գիրքը: Պոլսի Հնչակեան ցոյցերը, զորս իր «Պատմութեան էջեր»ուն մէջ այնքան նպատակաւոր կը ցուցնէ ժամանակին քաղաքական ոգիին, դիւանագիտութեան ո՞ր օրկանին մէջ գովասանով յիշատակուցան: Ինչ չըբեռնեցի՞նք թէ դիւանագիտութեան ատենանը՝ մեկ նման դժբախտ մահկանացուներու մարդկային առաթուր իրաւունքները ձեռք բերելու համար ընտրած ամենաօրինաւոր միջոցներն իսկ լրբութիւն եւ սրիկայութիւն կը հուշակէ միշտ:

Ինչո՞ւ այսքան փարիլ դիւանագետի կրանիթէ խղճին, որ մեր երեք հարիւր հազար նահատակներու յետին հոնչիւնն իսկ հեզնեց եւ դեռ մեր արիւն-ուշտ թշնամիին ընկերացած կը շարունակէ «Ինչալլահ»ներով կսկծացնել մեր արիւնահոս վէրքերը: Պ. Արփիար ռուսական թելադրութիւն մը կը նշմարէ Վասպուրականի յեղ. գործունէութեան մէջ եւ չը յիշեր թէ Խանասորի արշաւանքին մասնակցող Ռուսահայերը ի՞նչ հալածանքներու եւ բանտարկութեանց ենթարկուեցան իրենց տեղերը վերադառնալէ ետքը: Եթէ իրօք ռուսական կառավարութիւնը շահ մը ունի թրք. Պարսկական սահմանազլի խռովութեանց մէջ, ինչո՞ւ կարգիլէ իր հպատակ հայերու գործակցութիւնը եւ ամենախիտ հսկողութիւն կընէ իր սահմաններուն վրայ՝ թէ՛ զէնքերու փոխադրութիւնը եւ թէ կամաւորներու անցքը խափանելու համար: Աւելի զարմանալին այն է որ Պ. Արփիար հայ յեղափոխականներուն հակակիր քա-

ղաքականութիւն մը կուզէ վերագրել Պարսիկ կառավարութեան՝ մեղանշելով նոյն իսկ իր կապոյտ գրքին գէմ, ուր չէ սքողուած յիշեալ կառավարութեան հաշտ անտարբերութիւնը դէպի յեղափոխականներու գործունէութիւնը: Եւ եթէ վերջերս քիչ մը խտացաւ, այն ալ պետութիւններու պաշտօնական դիմումները գոհացնելու ձեւակերպութիւն մըն էր լոկ: Ո՞վ չի գիտեր որ եթէ հայերու խռովութիւնները այնպիսի վրդովում մը ազդէին Պարսիկ կառավարութեան ինչպէս կը ջանայ ցուցնել Պ. Արփիար, իրեն համար ամենահեշտ գործ մըն էր վերջնականապէս ջնջել յեղափոխականներուն հետքը իր երկրէն:

Նոյն իսկ Պարսիկ խռովումը լեռնագութիւնը նպատակաւոր է հայերուն, նկատելով որ անոնք աւելի կատեն Սիւննի ազանգաւորը քան թէ հայը եւ կամ որ ինչ ու է այլակրօն:

Մենք առաջինն ենք մեր յեղափոխականներէն քաղաքական շրջահայեցութիւն պահանջողներու, բայց չենք ընդունիր երբեք որ յեղափոխութիւնը շտար հետեւող մը դառնայ դիւանագիտական խաբուսիկ երեւոյթներու, կորսնցնելով իր անկախ ոգին եւ ազատ զեկավարութիւնը: Եւ միթէ պահուած կըլլայ այդ ազատութիւնը երբ դիւանագիտութեան պատրուակին տակ ջլատենք ամէն գործունէութիւն: Եւրոպական պետութիւններէն մին կամ միւսը չպի՞տի կրնան ամենայն դիւրութեամբ տիրանալ մեր ճակատագրին, երբ իմանան թէ մեր բարձրագոյն զեկավարները իրենց մէկ տեղեկագիրը ընտրած են իբր գաղտնաւարներ: Մեծն-Բրիտանիա երէկ իր զրահաւորները ծաւրտի բարձունքը հանելու անկարողութիւնը կը խոտովանէր, այսօր ալ Պ. Արփիարի ըսելով Արարատի ստորոտը հասցնելու անգործութիւնը կը զղայ: Ռուսիա օր ըստ օրէ կը կատարէ ինքնավար Հայաստանի մը միջաւանջէն, Յրանսան իբր հլու ճորտ

Ռուսիոյ քղանցքը կը բռնէ, Գերմանիա իր զոյգ թագակիր զաշնակիցներով Օսմանեան բանակը կը մարդէ մեզի գէմ:

Ահա ձեր դիւանագիտութեան կացութիւնը այժմ եւ միշտ եւ գուցէ յաւիտեան: Արգ ի՞նչ պէտք է ընել, Պ. Արփիար, պատասխանեցէ՛ք, անկեղծօրէն եւ բացարձակապէս ըսէ՛ք ինչ որ մտադրած էք անպարպապէս սերմանելու, եւ թշուառ ժողովուրդն ալ ձեզի հետ ժամավաճառ մի՛ ընէք:

«Թողու յեղափոխութիւնը, այդ պարագայ աշխատանքը եւ ետքաշուիլ»:

Այնպէս չէ՞: Ուշադիր ընթերցող մը այս պատասխանը միտոյն պիտի ստանայ ձեր ցարդ հրատարակած հակասական յոգուածներու ամփոփումէն: Ռուսներն ինչո՞ւ ձեր միտքը անսքող յայտնելու քաջութիւնն ունենալով՝ վրանակ «Ինչո՞ւ Վասպուրական»ի «Ինչո՞ւ Յեղափոխութիւն» խորագրին ներքեւ չէք դրած ձեր յոգուածը, երբ շատ եւ շատ տրամաբանական պիտի ըլլար ան:

Շատ լաւ, բայց թողունք Սուլթանի օձիքը, բայց նա մեր օձիքը կը թողուն նայինք. միթէ այս խայտառակ նահանջով ժողովուրդի վիճակը կը բարոքի: Գուք որ ձեր յիշողութիւնը տանջելով, անցեալի մանրամասնութիւններուն մէջ խորատուելով պատմութիւն կը գրէք, պահ մըն ալ հաճեցէ՛ք ներկայի՛ն վրայ դարձնել ձեր խոնջեալ աչքերը: Կոտորածները դողալով են, կոտորածները թալան, հրկիզում վերջացած. այդպէս կը նկարագրէ ձեր նշանաւոր Կապոյտ-գիրքը: Սակայն անգամ մըն ալ հասարակութեան դիմեցէ՛ք, կը լսէ՞ք սովատանջ, մերկ ու հիւժուած մանուկներու գողգոջ ձայնը, կմախացած մայրերու խուլ հեկեկանքը: Անգի՛ն՝ անոնց այրելու եւ հայրերուն տաժանելի աշխատանքը ոտտիկանի խաբաններին տակ՝ կը տեսնէք գուք: Մութ զնտաններու խորերէն հուզիւ լսելի խեղճուած ձայններն

ականջ գրէք, ասոնք ալ ազգին թանգ ուժն են, խոռվարարներ, զորոնք խաղաղաւէր Սուլթանը կաշկանդած է բարեկարգութիւնը պահպանելու համար: Այո՛, ա՛լ հարկ չկայ բացէ ի բաց խոզխոզելու, կողոպտելու, հրկիզելու. թրքական կառավարութիւնը վագրի գերէն յետոյ վիշապի գերը ընտրեց ու իր ուժգին զաւարտներուն մէջ կը պրկէ կիսամեռ ժողովուրդը մինչեւ որ հեղձամահ ընէ: Այս չարաբաստիկ խաղաղութիւնը եթէ յարատեւէ, վստահ եղէ՛ք որ քիչ ատենէն ձեր «Նոր Կեանք»ին մէջ հայ ժողովուրդին վերջացած կեանքին դամբանա՛անը գրելու փառքն ալ պիտի վիճակուի ձեզ:

ԿԱՐԻՃ

4ԵՐՁ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսչոյք, 14 Յունիս.

Այսօր, եկեղեցիի աւարտումէն յետոյ, պարտեղին մէջ հանդիսաւոր կերպով հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ վանի այն խումբ մը կտրիճներուն յիշատակին համար, որոնք մէկ երկու տարի առաջ անվահեր քաջութեամբ կոռուեցան տաճկին զէմ, իրենց սիրելի եղբայրներուն եւ հայրենիքի պաշտպանութեանը համար:

Պաշտօնէն ետք, տեղւոյս ազգ. զպրոցներու տնօրէն Պ. Սալահ-Գիւլեան մէկ երկու բառով բացատրեց օրուան հանգէսին նպատակը եւ խօսքը ընդհանրացնելով մինչեւ այսօր կատարուած գէպքերու եւ անձերու մասին խօսեցաւ:

«Այլեւս չէ կարելի հաշտութիւն գոյանալ հայուն եւ թուրքին միջեւ, ուր ահագին վիճ մը բացուած է արեան: Հայ զիւցազուներու ոտկորները գերեզմանի խորերէն վրէժ կը գոչեն, պէտք է որ անոնց մեզի աւանդ ձգած այդ խօսքը մեր խոյալը ըլլայ, որուն իրագործման համար անհրաժեշտ է յեղափոխութիւնը, որ միակ միջոցն է բնութեան շղթաներով կապկոպած թշուառ ազգերուն ազատագրութեանը»: Պ. Սահնախօսը վերջացնելով խօսքը, ըսաւ թէ հայը դարիւր ի վեր ստրկած ըլլալով իր պայերէն բնութեան զէմ գնել աւմէն արդիւք արհամարհելով, այսօր ալ նոյն բանը կընէ եւ պիտի ընէ

մինչև որ թրքական փոստ կտան վարութիւնը դիմէ իր օրհասակներին :

Երբ այս հանդէսը վերջացաւ, անմիջապէս սկսաւ երկուսն զպրօններուն Բ. դասարանի եւ Ա. դասարաններու հայերէնի քննութիւնը : Գրագրոցի սրահը լցուած էր հանդիսականներով, ներկայ էին քահանայ հայրերը, եւ թող խորհուրդի ու հագարարձութեան անդամները :

Քննութեան սկզբնաւորութիւնը եղաւ «Տէր կեցո» ազօթքը զոր աշակերտները երգեցին : Յետոյ Պ. Տեսուչը քանի մը խօսքով պարզեց զպրօնի ներքին վիճակն ու ծրագրերը եւ ապա սկսաւ Բ. դասարանի քննութիւնը : Տղաք որ միայն հինգ հոգի էին, մեծ յաջողութիւն ցոյց տուին թէ՛ աշխարհաբար լեզուի եւ թէ՛ գրարարի մէջ : Տղայոց եւ աղջկանց առաջին դասարանները, որոնք մէկտեղ քննուեցան, մեծ պատիւ կը բերեն իրենց ուսուցիչներուն Պ. Սապահ-Գիւլեանի եւ Օր. Տիգրանեանի : Երկուսն աշակերտները սահուն լեզուով մը կը կարգային մայրենի լեզուն եւ յետոյ մանրամասնաբար այլ եւ այլ պատմական եւ գիտական տեղեկութիւններով կարգացածին կը պատմէին : Մանաւանդ աշխարհաբար քերականութեան եւ ոտանաւոր արտասանութեան մէջ չափէն աւելի զգալի յատկութեան թիւն մը ցոյց տուին : Կննութիւնները աւարտելէն ետք, ներկաները սեղմեցին շոգարարձութեան անդամներուն եւ Պ. Տեսուչին ձեռքը, շնորհակալութիւն յայտնելով այն աշխատութեան համար, զոր չէր զլացած՝ աշակերտներուն յատկապէս թեանքը եւ ապագայ երկասարգութեան դաստիարակութեան համար : Արտաւարդ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Նիւ—Երբքի մեր բաժանորդներուն կը ծանուցանենք թէ Տիգրիս լրացրի խմբագրութեան անդամ Պ. Թ. Չարչաֆձեան սիրաբար ստանձնած է Շարժումի գործակալութիւնը սոյն քաղաքին մէջ :

Տ Ո Ւ Ր Է Ջ Ե Ր

Վ Ա Ն Է Ն Ն Ա Մ Ա Կ

Էօվր սէ գ'իֆօլ Տ'Օնիսի վերջին թիւին մէջ Վանի ամբիւնիկեան մեծաւոր հայր Տը Ֆրանսի մէկ նամակէն :

«Երեք շաբթ առաջ ինծի այցելեցին Վանայ կտրթաղ կամ Խարապա մահալլէսի, կարսը օղլու Մահալլէսի եւ Ժաթիկ կոչուած մասին բնակիչներէն. կուղային ինչորի ինչ որ հոգ տանիմ իրենց. եթէ անթիկուէք միայն, իրենց թաղը՝ մէկ կամ առ առաւելն երկու տարիէն պիտի պարպուէր իր քրիստոնեայ բնակիչներէն որոնց վիճակը անհանգուստի կը դարձնէին զրացի իսլամները, եւ այս վերջիններուն ձեռքը պիտի անցնէր. այս հակիրճ բացատրութեան վրայ միաբար զրի խնդիրը սեղին վրայ երթալ ուսուցիչներով :

Այս երեք թաղեր կը գտնուին Վանի Այգեաստան կոչուած մասին մէջ. հայոց մեծամասնութիւնն ու

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

«ՂԵՊ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—)(—

Այսօր աշխարհի ամէն կողմ, մանաւանդ այն երկիրներ, ուր ազգաւոր մարդու հացի խնդիրը լուրջ հողածութեան առարկայ եղած է, լիովին ընդունած է սա սկիզբները թէ մարդկային ազգի կէս—անօթի դասակարգին խարխուլ ելեւմուտքին մէջ հասարակչութիւն հաստատելու մէկ կարուկ միջոցն ալ հասարակար սպասելու եղանակն է :

Եւ որչա՞ր ուրախալի է տեսնել որ միւսեւոյն դաշտաբար, միւսեւոյն սկիզբները ժամանակէ մը հետէ ծաւալելու վրայ է նսեւ մեկ մօտ—Պուլկարիայ մէջ :

Սակայն ցաւ կը պատճառէ միւսեւոյն ժամանակ տակցնել որ եթէ այս մասին Պուլկարիայ մէջ անտարբեր գրեւոր ժողովուրդ մը կայ՝ այն ալ մենք հայերս ենք :

Չեմ գիտեր ընտան յատկութիւն մըն է թէ յոռի սովորութիւն մը որ մենք աւելի յաջող ընդունակութիւն մը ցոյց կուտանք օտարէն ընդօրինակելու այն «մօտաները» միայն, որ մեր արտաքին փառասիրութիւնը եւ ամբարտաւանութիւնը կը շոյն եւ աւելի կը նպաստեն մարդկային ազգի մը նվթական եւ բարոյական փճացմանը :

Վառնայի մէջ 29ի մօտ գործակցական կամ բաժանորդական ընկերութիւններ կը համրուին. իսկ ամբողջ շրջանակին մէկ 70է աւելի. եւ ցաւալի չէ՞ որ մենք գէթ ամբողջ Պուլկարիայ մէջ այդ տեսակ ընկերութիւն գոնէ մէկ հատիկ չունինք :

Արարց եկեղեցիէն բաժնուած են առուով մը որ մերձակայ լեռներէն կիջնայ եւ ան տան իր գեղնորակ ու կաւուտ ջրերը կը թաւալը անկողնի մը մէջ որ ամառը գրեթէ կը չորնայ : Միւս կողմէ ամառը կը գտնուին Շէմիրան Այթլի իսլամ թաղին, ուր կարծես կուտակուած է ինչ որ իսլամութիւնը կը պարունակէ կոյր մոլեռանդութիւն, անդամ ընողը, կողպուտի եւ արեան սէք : Ուրիշ կողմէ զաշտօրէով սահմանաւորուած է : Կոտորածէ առաջ աւելի քան երկու հարիւր տուններ կը համրուէին, զրեթէ ամէնքն ալ բարեկեցիկ, եւ շատեր յոյժ պատկառելի հարստութեան մը տիրացած : Օղբ հոն մարտուր է. պարտեղները՝ աղբիւրներու ջուրերէն սողողած, ցոյց կուտան հոն, ուսկից աւերի ստապարը չէ անցած, իրենց այգիներն ու իրենց պաղարիք ծառերը : Բուսականութիւնը, ինչպէս պարտեղներու մնացած մասին մէջ, զուրս կը յորդէ մինչև փողոցները, եւ զանոնք ազօտը ջրանցները եղբուրած են ուսկիցով, կախածախիներով. Վանի երկու տարի առաջուան այս ամէնքէն զեղած թմալ ու ամէնքէն հարուստ թաղն էր որ ուղ-

կընդունինք թէ մեր ազգային կեանքի հանգամանքները այնքան ալ նպաստաւոր չեն որ մենք ցոյց տանք հայու ձեռնբէցութեան ոգին. սակայն լաւ չէ՞ր ըլլար եթէ մենք առ այժմ գոնէ գիտնայինք օգտուել մեզ մօտ տիրող գործակցական շարժումէն :

Ահաւասիկ քիչ օրէն Վառնայի մէջ վերջնապէս պիտի կազմակերպուի եւ սկսի գործել «Հլեպ» հացի ընկերութիւնը, որուն նըպատակն է առանց ազգի կամ կրօնքի խտրութեան իրեն անդամակցողներուն կեանքի եւ ազրուտի համար հարկ եղած բոլոր նիւթերը մատակարարել «աժան եւ ընտիր» :

Անցեալ մայիս ամսուան 31ին գումարուած ընդհ. ժողովէ մը ընդունուեցաւ ընկերութեան կանոնադրքը. ն այդ կանոնադրի համաձայն ընկերութիւնն առ այժմ՝ մինչև որ իր բաժանորդներուն թիւը եւ գրամազրուելը ստորաբանայ՝ պիտի զրազի միայն «իր բաժանորդներուն» համար «մաքուր» հաց պատրաստել :

Կանոնադրին մէկ էա՛ն տրաք մարդութիւնն ալ սա է որ ու է անհատ պիտի կրնայ առ առաւելն 20 բաժին՝ եւ ու է բաժնետէլար մէկ ձայն միայն ունենալ : Հարկ է գիտնալ միանգամայն թէ «Հլեպ» բաժանորդակցիլ ու է մեծ զոհողութիւն չը պահանջեր : Մէկ բաժինը 50 ֆր. կարծէ եւ մաս առ մաս վճարելի. ստորագրուած պահուն 5 ֆր. եւ յետոյ ամէն ամսադրուի 5—աւան ֆր. մինչև որ բաժնեկները ամբողջանայ :

Անդամակցեցէ՛ք «Հլեպ» ի եղաք շաբթական փոքրիկ գումար մը—1 ֆր. 25 ամիթ. խնա-

յելով եւ ընկերութեան անտակին յատկացնելով—որ սակայն ձերը ըլլալէ չպիտի դադրի եւ զոր պիտի վճարէք մինչև որոշեալ ժամանակ մը միայն, թէ՛ խնայութիւնը ըրած պիտի ըլլաք եւ թէ ձեզ ու ձեր ընտանիքին համար «աժան եւ ընտիր» հաց պիտի ունենաք :

Ամէնը այս չէ : Ձեր սպասած աշխուրհի եւ կերած հացին արտադրած շահը նոյն իսկ ձեր գրպանին մէջ մնալով՝ ու է խոշոր կամ մանր վաճառականի հոյակապ բախտը շինելու չի պիտի ծառայէ, վառնդի ընկերութիւնը ամէն արեգալուս հաշիւ տեսնելով եւ իր արտադրած զուտ շահին փոքր մաս մը պահասի գումարէն յատկացնելով մնացածը պիտի բաժնէ ընկերներուն՝ անոնց բաժիններուն եւ սպասուած քանակութեան համաձայն, եւ այս կերպով ամէն մարդ իր կերած հացին համար վճարած գրամին մէկ մասը եւ պիտի ստանայ : Հրաշալի բան չէ՞ այս :

ՏԻԳՐԱՆ ԱՃԻՄԵԱՆ

Հ Ա Յ Ո Ղ Բ Ե Ր Գ Ա Ս Ը

—)(—

Թան իր յունիս 16 թիւին մէջ սա խորագրով հետեւեալը կը գրէ .

Հայաստանի կոտորածներէն առաջ հայկական թատրոն մը կար : Շէքսպիրի, Քոռէլլի և հոգաւոր արեւմտեան հայերէն թարգմանութիւնները կը ներկայացուէին Տըրապիզոն, Պոլիս, Իզմիր եւ Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ :

Բայց այսօր, սոյն թատրոն քանդուած է, հայերը ցրուած են, եւ երէկ, Բարիկ, Թէաթոն Մանուէլի մէջ է որ Հայաստանի արեւստապետներուն ամէնքն հոգաւորը, Պ. կարապետ Կալֆաեան, իր մայրնի-

ջական աւերուած մօտալուտ կերեւոր :

Աւելի մեծապի աւերակներ ուլք գրաւեցին. ասոնք էին երեք մեծ տուններ ուր ընտկող երեք եղբայրները հարստացած էին ծառայութիւններով Վառնայի մէջ եւ որոնց կրեքն ալ Չարդուած էին յունիս 15 ի կոտորածին : Չորրորդ եղբայրը որ նոյնպէս հոն մեռած էր, ան տան իր նոր տանը հիմունքը կը գնէր որոնք գեանին երեսէն մէկ տք վեր կը բարձրանային : Այս խարխուխներ թափուր ան շէնքէն զոր պիտի կըրէին, իսկապէս պատկերն էին մեր կերպով մը առկա կեանքին յորձ հետէ մոլեխանձ վայրենիներու գարշիլի ետթաղանը արեան կոհակներ վազցուցած էր ամբողջ նահանգին մէջ :

Գայլս փութացուցի փախչելու համար այս կսկծոտ տեսիլքէն եւ մտայ տունն ուր կապտուէլ : Հոն կիներն ու աղաք կը բնակէին միայնակները որ ուրիշ թաղ մը կը բնակէին հոն եկած էին իրենց այգին յօտելու : Հիմակ ուրիշ պատմութիւններ ոչ նուազ թախճոտ քան ստաղինները :

(Շարունակելի)

լեզուով եւ խոսեն բազմութեան անջեւ խաղաց :

Տարօրինակ տեսարան մըն էր : Եւրիտասարգ արուեստագէտը , յոյժ արտայայտիչ գեղեցիկ զլլտով , օժտուած խորին ու ասք ձայնով մը , կը կատարէր Համլէթի գերբը , եւ իր գեղեցիկ խաղերը , ճշմարիտ արցունքները որք կողովէին իր գեղեցիկ , արհաւիրքը որ այնքան ցաւազկին կերպով կը կծկէր իր զիմազմերը , ուժգնապէս ցնցեցին ջիզերը սրահին որ երկարօրէն ծախահարեց եւ քանիցս ի սեռ կանչեց գերասանը :

Պ. Փան Պետար նիտարն րացման պահուն խոսեցաւ հայ թատրոնին վրայ :

Պ. Կարապետ Գալֆանեանէ տեղեկութիւններ ուզեցինք իր ու իրեններուն վրայ :

Քանանչորս տարու է : Երբ կատարածները ւկան , ինք Վոսփորի ավերուէն վրայ համբաւ կը վայելէր : Փոքր—Ա. իս , իր ընտանիքին քով կը գտնուէր : Իր գեղն տարած էր . հայրն ու մայրը մնում էին չարչարանքով . կատարուի լեռ փախչելու երեսուն օրէ աւելի հոն կապրի խոտերով եւ զագրի թափթիփա քնիւրով :

Հետք առած արկղիկի մը մէջ կը գտնուէին գոհարներ եւ չէջ մը դըրամ . ասոնց չնորհիւ կը վճարէ նաւուղչէք մը . եւ ուրիշ ամիսէ ի վեր Բարսիլի մէջ կապրի , սորվելով ֆրանսիսերէն եւ մեր լեզուով սղարկական մեծ գերեր խաղալու փաստարթութիւնն ունենալով , զոր կը քաջալերեն Մուսէ—Սիւլի եւ Գոմէտի Զըրանսէլի արուեստագէտները :

գանին տեղ գտաւ կը փափայր . հետեւ մեզմէ գուք , ս'զ վասակատերներ , որովհետեւ ձեր մեծաւորաց գերերը կը փորձէք կատարել . եթէ գուք ու ձեր մեծաւորները այնքան համոզուած էք վասակտեր քաղաքուկանու թեան , հիմակ ալ առ թը շատ լաւ է յարմարեր ձեզ—Յաղկերթի տեղը՝ առձիկ Սուլթան մը կայ , որուն ստեղծի առջեւ Արմաշէն ելլող կաղնիպատ , վարդապետ ու արքայացու ( ) երկրպագելով կը խոնարհին իրենց բնարան բնութիւյթ անձնասիրութիւնն ու նեղ հաշիւներ : Հետու , պարուն արագուներ ու վարդապետներ , հետու Եղիշէի ու Վարդանի գաղափարով սողորուած ուժեղ պատակարգէն . ձեր տեղը երբեք իւրաքանչիւր արկղիկի սեղանին չաւրջն է , ու ձեր սրտերը արժանի են Օսմանիէն ու Մէծիտիէն պատուանշաններուն : Մեզի թողք մեր Վարդանն ու Եղիշէն , անոնք զմեզ պահեցին այս օրերուն իրերն , մենք ալ անոնց յիշատակով կը մտնանք մեր անձուն ցաւերը . . . :

Երեք անգամ տաճարէն գուրս ելլալով Ռասանի դուարթ գաշաի ուղղութեամբ կը գիտնէք ծովն ու Արատարի կենսատու օդով մեր կուրթիւնը կազդուելով զարձակ կերթանք անոր գերեզմանին վրայ , խորին լուսթեամբ ու թախիծով համակուած կը կատարենք մեր ուխտը , ու յետոյ , նուր գալով այդ սրբավայրէն , նուիրական յիշատակներ իւր յուզման ծանր բեռի ներքեւ . ձի նստած կուզենք մեր գնացքը դեպի Հայոց Զօրը :

ՊԵՏ

ՀԱՅՐԵՆԻԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—)(—

Սակայն միաքս կուգայ այն լուրը թէ Պուլիարական հայտարարական Արտաշական խեղճ ուսուցիչը ամբողջ ժողովրդեան մը ներկայութեան , Վարդանանցի խորհրդաւոր հանդէսի օրը , իր տխրար բանախոսութեան մէջ յանդգնած է յայտնել , հրապարակով պտուղով , թէ «Վարդան անմիտ , յիմար եղած է , Վասակը խեղճ ու քաղաքագետ , իսկ Եղիշէն ալ կեղտոտ ու կղերմ միտ ոգով բոլորովին խեղաթիւրած է իր պատմութիւնը» : Ե՛՛ , խեղճ Եղիշէ , երբ հայ ճշմարիտ բանասէրներ , զրազաններ ու հայրենասէրներ ասանը զարէ ի վեր քեզմով զբաղած եւ քու ներշնչած հոգիի մեծութեանէն թուիչ առած են , երբ Արփարեանն ու Զօպանեան քու երկը , իբրեւ հայ մտքի ու սրտի բարձր ու ազնիւ արտագրութիւն ամբողջ աշխարհի ներկայացնել ազգային փառք կը համարին , անդին ողորմաւբ իր սիրացու մը , թուլակորին ծթած Վարդապետանի անձան ու անաղի քննադատութեանն քաներ սորվելով , ամենակեղտոտ անականներով կը մկրտէ զքեզ : Եթէ այս անխմաստ ու անզգափար խօսքերը խօսողին , Արմաշի հացն ու Չուրը երեք տարի ուսող խմող արիւցու մը ըլլալը չզխանայի , թերեւս այդքան ցաւ չզգայի , Հայեր կարեն վանք հաստատեցին որ ազգային պատմութիւնը ու լեզուն ուժ առնէ եւ բեղմնաւորի . բայց ընդհակառակը , կը տեսնենք որ այդ վանքի փարախէն անժամանակ հետացած յանձնապատան մէկը , չը գիտեմ իր գաստուներէն որին սխալին յետոյ , Եղիշէն կեղտոտել ու վասակը վար-

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԵՒՍ

—)(—

Պ. Թօփալեանց—Նախորդ գրութեան մէջ (ց)ն մոռցած ըլլալու նուս ներդրութիւն—վերջապէս եկաւ արդարեւ ըստմին նայելու վայն օրը ուր իրեն կը սպասէինք , առտուն կանուխ , մութն ու լուսուն եկեր է մեզ տեսնելու , եւ մեր խմբադասունը դոց գտնելով , քէն ըրեր եւ գացեր «գառ բացողին» ըսեր է թէ մենք ստորագրելէ կը խոստանինք : Ս. յո վերջինը մեր վաղազարթոյց բանագնացին յայտնած սոյն կանխահաս կարծիքը իրեն զէնք ըրած , իսկայն կը վաղէ խմբագրելու այն ամօթալի յայտարարութիւնը զոր ուզաւ միտ «Իրաւունք» այնքան յալըրտակութեամբ հիւրընկալեց իր սխեակներուն մէջ : Հասկցուցինք Պ. Թօփալեանցի թէ ինք շատ երախայրար վարուած էր այդ գործին մէջ եւ անձարակ բանագնացի դեր կաւարած : Եթէ առտուան այդ ժամուն մեր գործասեղին չէր գտած մեզի ,

( ) Բացառութիւն կը կազմէ այս միջնորդութեան գաղափարներին միտայն Տ. Մաշթոց վարդապետ Գալֆանեանի ընդ վանքի , կուսակալն ու յիշատակեան երկուստար կղերմ , որ այդ ազատների բունէն հազու հազ ճողովրդեացու , իբրեւ ժողովրդի գաւակ ժողովրդեան հետ ստատակութիւն :

զէթ պէտք չէ՞ որ երկուսը մը թողուր , որպէս զի գիտնայինք թէ եկած էր , պէտք չէ՞ որ կէս օրին հանդիպէր կամ գոնէ տուն մը զրկէր մեզ , որպէս զի մենք երթայինք գտնել զինքը : Համոզուեցաւ Պ. Թօփալեանց եւ առաջարկեց որ իրողութիւնը պարզող հերքում մը զրէ «Իրաւունք»ին , մեզ նկատմամբ իր անձարակութեան պատճառով եւ զած նախատինքներուն դէմ : Ասոր վրայ մեր բանակցութիւնները վերականգն , այսինքն իսկայն մեր ստորագրելիք թղթին պատճէնը առինք որպէս զի յանձնէ որու որ պէտք է : Եթէ այդ թուղթը «գառ բացողին» գործին կը յարմարէր , իսկականը պիտի յանձնէինք :

Այժմ Պ. Թօփալեանց զարձեւալ «Իրաւունք»ի մէջ յօդուած մը գրելով , հրապարակին վրայ տիրող պահանջներ իրենց վարակուածի մը սճը կը գործածէ եւ կատարեց թէ մեր տուած առ թուղթը «աւելումս» է եւ թէ «գառ բացողը» «Իրաւունք» մերժեր է զայն :

Կարտունք Պ. Թօփալեանցը հրատարակել մեր առաջարկած թուղթը : Անոր «անիմաստ» թէ բանաւոր ըլլալը ընթերցողները թող գտնեն : Առ թուղթը գառ բանալու բաւական է . միայն թէ դատաւարտել տալու անբուական , բան մը որ «գառ բացողին» գործին չգար կոր :

Գալով Պ. Թահմիզեանի , որ ասկէց առաջ հերքումը տուած ըլլալուն զըջացած էր , հիմակ ալ զըջացած ըլլալուն կը զըջայ , Զըջուեցանք այս անվերջ շարքը չենք գիտեր թէ մինչեւ ս'ը պիտի տանի առ ինչճ ոչան . բայց սա ստոյգ կերեւայ թէ ահաբեկումը որով համակուած է , ակնբեր խանգարումներ առաջ բերած է իր յիշողութեանը մէջ :

Իսկ Պ. Թօփալեանց , որ ստառաջին խոշոր սխալը գործել տուողն է եղեր Պ. Թահմիզեանի , ինչպէս ինք խոստովանեցաւ , տեսնելով թէ ընդունել չկրցաւ . ալ մեզ այն արտառոց առաջարկը որուն բաներն հանդիսացած էր ինք , իր զաւեշտախօսութիւնները մէկ դի թողած թթուած խօսքեր կուզէ մեզ դէմ :

Նկարագրի այս փոփոխութեան ստատրներէն մէկն ալ ըլլալ կը թուի իր նիւթական շահերը վտանգելու վախը . բայց կը յիշեցնենք իրեն թէ իւր թուական նկատումէ վեր աչնուութիւնը եւ ճշմարտութեան պաշտամունքը կան աշխարհի վրայ : Եւ կը ցաւելինք որ մեր յարգած անձերէն մէկուն վրայ այդ գեղեցիկ ճամբէն հեռանալու ծանր նշաններ կը նշմարենք :

—)(—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԱՆՁ

—)(—

Հայաստանի սովետներուն համար մեր բացած հանդիսակութիւնը պիտի շարունակուի մինչեւ յուլիս 15 : Այս թուականէն յետոյ հանգանակութիւնը փակուած է եւ ան բարեւելները որ կը փափային իրենց անօթի եղբայրներուն սեւ է նպատակը , մինչեւ այդ թուականը մեզ հասցնելու են :

ՔՐՈՆԻԿ

—)(—

Վերջերս բանաստեղծ—մանկավարժ Սմբատ Շահալիզի զըրական գործունէութեան 30 ամեայ յարեկանը տօնուած էր Ռուսիոյ հայոց մէջ . եւ այս առթիւ 8,000 ռուպլի նուիրած էր յարեկանին : Արդ , այս վերջինը այդ գումարը իր կարգին նուիրեր է Տիգրանի հայոց բարեգործական ընկերութեան որպէս զի իրը հիմնական գրտնագրուի ծառայէ «Արովեան եւ Կարեան» անուամբ , ի նպաստ կարօտ գրագէտներու :

Այս նուիրատուութեան վեհ ընտրութիւնը ամէն գովեստէ եւ գնահատումէ վեր է :

Կովկասի հայ թերթերը կրմացնեն թէ Ա. Պօզոսեանի վերջերս նուիրած 10,000 ռուպլիին կէսը պիտի յարկացուի մանկական եւ ժողովրդական զըրքրու հրատարակութեան , իսկ մնացեալը Տիգրանի հրատարակչական ընկերութեան տրամադրութեան տակ պիտի մնայ , որպէս զի այդ գումարն սովորովը զրական մրցանակ մը հաստատուի լուրջ հեղինակութեանց համար :

Սխալեալ ընկերութեանց կամ նոր բառով միացեալ աղբարտիկ վարժարանաց խնամակալութիւնը նուագահանդէս մը կազմակերպել խնդրած ըլլալով , Գալաք ժողովը երկար խորհրդացութիւններ կատարելէ ետքը , սրոշեր է պէտք եղած գիմումը ընել , հրաման ձեռք բերելու համար :

Սղերդի տեղապահ Թէոթորոս վարդապետ , Տիարպէրի եկեղեցիին սնտուկէն 60-70 մէծիտիցէ շորթեր է : Կերեւայ թէ ն. արժանապատութիւնը իր քաղաքին տըքատաց պիտի բաժնէ այդքան . . . աչնուօրէն ձեռք բերուած գումար մը :

Բագուի հայերուն աչնուութիւնը մէկէ աւելի առ թիւնուութիւնը մէջ պարզուած է : Կը յիշուի անոնց բունած պատուարերը ընթացքը գաղթականներուն հանդէպ : Այժմ կրմանայնք թէ նոյն քաղաքէն 14 բարեխէր ազգայիններ իրենց ծախքով 50 որերը գեղեցիկ են Կարնոյ Սաստարեան վարժարանին մէջ :

Գարակէօզեանի կտակը անփոփոխ կացութեան մէջ է : Անցեալ օր կղզիի շողեանուն մէջ յայտնեցին աւագակապետ Գրիգորի՝ Գարակէօզեան կտակը ազգ. հանգանակութեամբ մը գործադրելու մասին եղած առաջարկը : «Ասիկա ազգէկ մտածեք են, նախէցէք, ասոր ըսելիք չկայ» պատասխանեցին Ե. Արքային, ամէնէն ստորին գողին նախանձը շարժող պաղարիւնութեամբ մը :

\* Կըսուի թէ Պոլսէն հրաման գացեր է գաւառները որպէս զի գաւառէ գաւառ ճամբորդելու արտօնութիւն արուի Առաջնորդներէ երաշխաւորուած հայերուն : Այս բանը իմանալուն պէս, Պատրիարքը հրահանգ զրկեր է առաջնորդներուն, որպէս զի երկու վիճակներէ ստորագրուած երաշխաւորութիւն մը չառած . . . չթողարարեն այդ ճամբորդութիւնները : Կեցցե՛ք, գիւնանագէտ Հայր Սրբազան :

\* Միացեալ նահանգաց Բոնքորտ քաղաքին հայերը, 22 անգլ. ոսկի զրկեր են Պատրիարքարան, որբանոցներու նպաստին համար : Հայաստանէն հասած ամենօրեայ խնդրանքներուն գոհացում չպիտի կրնայ տալ Պատրիարքարանի դատարկ գանձը, եթէ մօտաւոր և հեռավոր ազգայինները իրենց եղբայրսիրական պարտականութեանց մէջ յարատեւեն թերանալ :

\* Չիգակօէ բրոֆ. Թաթարեան կողմէ ընելով, Ամերիկայի հայ կամաւորներէն որոշ խումբ մը կազմելու առաջարկը կընէ : Տարակոյս չկայ թէ անոնք որ Ամերիկայի համար կուտան զանազան հայ տոհմին երախտիքը և արիւթիւնը փայլեցնել կըզձան այս առթիւ, շատ աւելի պիտի յաջողին բրոֆ. Թաթարեանի հրահանգին համեմատ գործելով, քան թէ ամերիկեան անուններու տակ սքողուած մնալով ու հազարաւորներու մէջ աննշմարելի անցնելով :

\* Յիլիպէի հայ եկեղեցիին աւագերէց Տ. Արիստակէս քհնյ. Բուսնուքեան նախընթաց ԲՇ. մեանելով՝ յուղարկաւորութիւնը մեծ հանգէտով տեղի ունեցեր է յաջորդ օրը :

\* Վերապահութեամբ կը հրատարակենք «Մշակի» մէջ հրատարակուած Ռոս գործակալութեան հետեւեալ հեռագիրը :

Մուլթանը յանձնարարեց յայտնել հայոց պատրիարքարանին, որ կրօնական գործերու նախարարին կարգադրութիւնը շնչուած է և (Սսի) կաթողիկոսին ընտրութիւնը կրնայ կատարուիլ նախկին կանոններու համաձայն :

### ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—(—)

Մանիսի մէջ Ասրմ անուն գինով թուրք մը ատրճանակ մը ձեռքը փոշոցէ փողոց վազեր և գէմը ելլողը վերաւորեր է : Այս վերջիններուն մէջ կիներ և զպրոցական տղաքներ ևս կան :

Այս տեսակ դէպքեր չեն կրնար զարմացնել միզ երբ աչքի առջև ունինք Բիրայի մեծ ճամբուն վրայ 16 հողի սպաննող և վերաւորող թուրք սրիկայ զինուորականը որ սակայն կախաղան չհանուեցաւ :

—Ռոպէրթ Գոլէճի այս տարուան հանդէսին մէջ հայ լեզուով բնաւ աստիճանութիւն չէ եղած հայ ընթացաւարտներու կողմէ : Ներկի է գիտել տալ թէ Ամերիկեան հաստատութեան մը համար շատ պատուաբեր չէ Մէարիֆի ամէն նախանձու և անմիա հրահանգներուն անաւ :

—Յուլիս ամսուն Լոնտոնի մէջ գումարուելիք կանանց հիւանդութեանց համաժողովին պիտի մասնակցի նաեւ հայ բժշկուհի Օր. Սուրբիկ Ոսկեմատն որ արդէն Պոլսէն Լոնտոն մեկնած է :

—Մուլթանը հրամայեց է որ կրէտացի որբերուն մէկ մասը Պոլս տարուելով զիշերօթիկ զպրոցները գետնորին : Այս անմիջները գէթ աւելի բարեխաւ են իրենց հայ վիճակակիցներէն որոնցմէ հազարաւորներ անողոք բախտին թողուած են, կամ Ֆէրքէնի պէս սրիկաներուն քմահաճոյքին խաղալիկ դարձած :

—Տիրբանակերտի մէջ Շէմիրլի և Վաթի ըսուած քրդական ցեղերը Իրարու գէմ պատերազմ հողակեր են : Կըսուի թէ կառավարութիւնը պաշտօնականը զրկեր է հաշտեցնելու այդ ուժերը որոնց անշուշտ պէտք ունի անդէն հայոց գէմ գործածելու համար :

—Օսմ. բազմաթիւ պաշտօնատարներու մէջ, որոնց Պուլկարիոյ իշխանը պատուանշաններ չնորհած է, կը գտնուի նաեւ օտար մամուլի գիւնանին պետը Նշան էֆ. Սէֆէրեան որ Գաղաթային Արժանեաց Ա. կարգի պատուանշան ստացած է :

### ՃԻՒԱՂ ՄԸ

—(—)

Իզմիրի որբանոցին տնօրէն միսինար Ֆէրքէնի ի գործ զրած քստմիելի անբարոյականութիւնը, ինչպէս գրած էինք, մեծ յուզում առաջ բերած է նոյն քաղաքին մէջ : Որբանոցը ամերիկացի բարեսէր անձերու օժանդակութեամբ կը հողացուի եղեր և 25 ի չափ երկսեռ հայ որբեր կը խնամուին եղեր այն տեղի Բժշկական տեղեկագրով ամէն բան հաստատուած է : Ազգ. Հիւանդանոցը փութագրուած են թշուառ որբուհիները որոնք հայ են : Ֆէրքէն աստիճանութեան յանձնուեր է : «Արեւելեան Մամուլ» հետեւեալ կերպով կը վերջացնէ այս ամօթալի գայթակղութեան մասին գրած մէկ յօդուածը. «Տեղ տեղ հայ թշուառ որբեր կրօնափոխ ընելու համար իզորդ գրուած փորձերը լսած էի արհամարհանքով, լսած էի թէ ինչպէ՞ս կրօնամոռներ, աստուածպաշտութեան զիմակով անմիզ և պարզ հոգիներ իրենց մայրերի լեզուէն ու եկեղեցիէն անջատելու ճգնած են, և զիս

կը ճգնին . սակայն չէի կարող երեւակայել որ մողեկան կրից զո՞՞ ալ պիտի ըլլային անմիզ գտնուողներ կրօնագէմ գայլերու կողմէ . . . » :

### ՏԵՂԱԿԱՆ

—(—)

Քաղաքիս գաղաւորներէն մէկը վերջերս ժառանգական խնդրի մը առթիւ թուրքի տուն մը գըտնուած ատեն, պատին մէջէն կնիք մը երեւան հաներ է, որուն վրայ հետեւեալ արձանագրութիւնը կը կարդացուի. «Ընկերութիւն Սանուց Սիսակեան, Վաւնա» : Այդ կնիքը այրած զպրոցին կը պատկանի եղբ. և այդքան օտար միջավայրի մը մէջ երեւան գալը զարմանքը շարժեր է դատարարին, որ, կըսուի թէ, քննութիւն պիտի բանայ խնդրը լուսաբանելու համար : Այս լուրը վերապահութեամբ կը հրատարակենք :

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

#### ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բլայս Տէլ Էսթէն հեռագիր մը կըսէ թէ կը կարծուի որ պատմաբան Կարօյ Սանթիակօի արեւմտակողմը պիտի ուղղուի զօրավար Բանտօի գէմը : Թամբաէն փոխադրանաւեր ճամբայ ելեր են 500 զօրքով :

—Ամերիկեան ծովային նախարարութիւնը Նիւ Եօրքի մէջ ուսեստով լեցուն նաեւ կը պատրաստէ՝ հրամատար Վաթսընի ընկերանալու համար, որուն գլխաւոր պաշտօնը պիտի ըլլայ հետեւիլ Քամարա ծովակալի նաւատորմին Փիլիպպեաններուն մէջ :

—Պ. Սակաթա, նախարար պետ Սպանիոյ, յայտարարեր է թէ խաղաղութեան մասին շըրջած զրոյցները ծիծաղելի են : Քամարա ծովակալին նաւատորմը, որուն եզրպատկան կառավարութիւնը արգիլեց ամուխ առնել Բօռ-Սախտէն, անցեր է Սուէզի շրանցէն :

—Մանթիակօի վրայ ընդհանուր յարձակումը ծովէն ու ցամաքէն սկսեր է յունիս 19ի առտուն : Մեկեզին ճակատամարտ մը տեղի ունցեր է ամբողջ գծին վրայ : Հրամանատար Լաւթըն գրաւեր է Քապանօն, արուարձան Սանթիակօի : Ամերիկեան նաւատորմը ուժակոծեր է նաւահանգստին ամրութիւնները : Սպանիական նաւատորմն ալ կրակ ըրեր է ամերիկեան զօրքերուն վրայ որոնք շատ մօրիկցած են քաղաքին :

#### ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսական նոր գահալիճը հետեւեալ կերպով կազմուեցաւ . Պ.

Հանրի Պրիսօն՝ վարչապետ և ներքին գործերու . Սարիէն՝ արդարութեան, Տէլքասէ՝ արտաքին գործերու, Բէթրալ՝ երեւմտից, Քալէնեաք՝ պատերազմական, Լօքուօ՝ ծովային, Լէօն Պուրժօ՝ հանրային կրթութեան և գեղարուեստից և այլն : Ինչպէս կերեւայ, Հանթօ փաշա բացակայ է այս ցանկէն, ինչ որ մեծ կորուստ մը չէ :

—Ֆրանսական դեսպանը զեկուցեր է Իրան որ եթէ Հայաստանի և Պոլսոյ հայկական ջարդերու ատեն ֆրանսահպատակներուն կրած վնասները մինչեւ առաջիկայ յուլիս 10 չհատուցուին, — թուական ուր թուրքիա յունական տուգանքին վերջին վճարումը պիտի գանձէ—Ֆրանսական կառավարութիւնը այդ վերջին վճարումը արգելքի տակ պիտի առնէ : Իտալիա ևս նոյն պահանջումը ըրեր է բերանացի կերպով : Ֆրանսաի պահանջքն է 1,050,000 ֆր. իսկ Իտալիոյ՝ 400 հաղար :

### ՊՕՐՍԱ

Վառնա 23 Յունիս  
ՊՈՒՂՏԱՅ  
Վակօն եօզ, լիպրա 47—51, հէքթօլ 8—8.20 ֆրանք  
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 7—8 ֆրանք  
ԱՐԲԱ  
Լիպրա 38—40 հէքթօլ 5.50 ֆրանք  
Առապա մուամէլէսի նարոյճոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.  
Կիւնտէ 2—3 արապա պուզտայ, 1—2 արապա արբա, կէլմէքտէ տիր :

ԳՈՐԾԱԿԱՏԱՍՐ ԵՒ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՍՐ  
Գիրք ամէն լեզուէ, թուղթ, մեկան և ամէն կարգի դասական առարկաներ, ուղղագ կը զրկեմ փութով : Հայ եւ այլ լեզուա թերթերու բաժանորդ գրուել ուղղագ զիւրութիւններ : Քէօթիէնէն և այլ տեղերէ, Ամերիկա և այլ ուրեք գնալ փափագողաց խորհուրդ, զիւրութիւն և ծանօթութիւններ :  
Հասցէ՝  
Paul Gigerian, strada mangalia No. 141  
Constanta (Roumanie)

### ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՈՒՆ ԺԻՇԻ ԴԷՄԸ  
Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիֆլիսի և Երևանի և ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափակներին իրենց գարնանային ու ամառային ժամագրավայր մը ընեն զայն զբօսնելու և ճաշելու, Պոնտոսեան ախորժաբի հովիտուն ու Սեւ ծովի կապոյտ սարածութեան առջեւ :

Հակառակ այս հրապուրելի առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրամատչելի գիւնեք թէ ըմպելիքի թէ կերակուրների մասին :

Печатница «Взаимность», Варна.